Հայաստանի Հանրապետության մեծարգո վարչապետ, հարգարժան նախարարներ, հարգելի հյուրեր, գործընկերներ, ուսանողներ

Այսօր մեկնարկում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» խորագրով 25-րդ գիտաժողովը, որը նպատակ ունի ոչ միայն վերհանելու մեր գիտական ներուժը, այլև հավակնում է հանրությանը ներկայանալ որպես տնտեսագիտական հարցերի հետևողական ու համակողմանի քննարկման հարթակ:

Մեզ համար կարևոր ու առաջնային է՝ հանդես գալ սկզբունքային ու կառուցողական գաղափարներով, վերլուծություններով, անաչառ տեսակետներով: ՀՀ Կառավարությունը մեզանից սպասելիքներ ունի, իսկ մենք մեր հերթին պետք է գիտակցենք մեր ներուժը դրսևորելու անհրաժեշտությունը, որպեսզի ի հայտ բերենք գիտական ու հետազոտական բարձր արդյունքներ՝ լուծելու համար երկրի առջև ծառացած սոցիալ-տնտեսական հիմնա¬խնդիրները, նախանշելու զարգացման նոր ու իրատեսական հեռանկարներ:

Մեր գիտաժողովն իր շուրջն է համախմբել ոչ միայն հայրենական տնտեսագիտության անվանի ներկայացուցիչներին, այլև երիտասարդ հետազոտողների, արտերկրի գիտնականների, որոնց հետ նպաստավոր միջավայրում կլսենք ու կքննարկենք գիտական բարձրարժեք զեկուցումներ, կուրվագծենք, կյանքի կկոչենք նոր ծրագրեր: Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ հանրապետության բոլոր տնտեսագետներին հրավիրել համատեղ ստեղծագործական աշխատանք ծավալելու, մեր ջանքերը միավորելու տնտեսագիտական ծանրակշիռ արդյունք ստեղծելու ու ներկայացնելու գործում:

Ես հավատացած եմ, որ հայ տնտեսագետներն ի զորու են սատար կանգնել հարազատ երկրի Կառավարությանը, նպաստել տնտեսական կյանքի վերելքին: Գիտաժողովի հարգելի մասնակիցնե՛ր, մաղթում եմ ձեզ եռօրյա արգասաբեր աշխատանք, գիտաժողովի խորագրին ու նպատակին համարժեք ստեղծագործական ընթացք, որը մի նոր ձեռքբերում կամրագրի համալսարանական գիտության զարգացման ճանապարհին:

ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, Հեռ.՝+37410 521720
Ֆաքս՝+37410 528864, Էլ-փոստ՝info@asue.am, www.asue.am